

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացու-
թյունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես
Մարգարյանի, Արծվիկ Մինասյանի և Խաչիկ Հարությունյանի՝ օրենսդրական նախաձեռնու-
թյան կարգով ներկայացրած «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը
չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապե-
տության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ևս կարևորում է իրավունք հաս-
տատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների իրավական կարգավի-
ճակի կարգավորման խնդիրը և գտնում է, որ այն պետք է իրականացնել հանրապետության
ամբողջ տարածքում:

Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հան-
րապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Երևան քաղաքում իրավունք

հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը: Նախագծով իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների նկատմամբ քաղաքացիների գույքային իրավունքների վերականգնման վերաբերյալ Երևան քաղաքում գտնվող անհատական բնակելի տների համար սահմանված իրավական նորմերը կտարածվեն հանրապետության բոլոր համայնքներում գտնվող՝ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների նկատմամբ:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագիծը թերի է, առաջարկում է խնդրի կարգավորման հատվածական լուծում և այս տեսակետից ընդունելի չէ:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուսայանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Երեւան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Երեւան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը «ԵՐԵՎԱՆ» բառից հետո լրացնել «ԳՅՈՒՄԸ ԵՎ ՎԱՆԱՃՈՐ» բառերով՝ համապատասխան կետադրությամբ, իսկ «ՔԱՂԱՔՈՒՄ» բառը փոխարինել «ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ» բառով:

Հոդված 2. Օրենքի 1-ին, 2-րդ հոդվածները եւ 4-րդ հոդվածի 1-ին մասը «Երեւան» բառից հետո լրացնել «Գյումրի եւ Վանաձոր» բառերով՝ համապատասխան կետադրությամբ, իսկ «քաղաքի» բառը փոխարինել «քաղաքների» բառով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 4-րդ մասերը «Երեւանի» բառից հետո լրացնել «Գյումրիի եւ Վանաձորի» բառերով՝ համապատասխան կետադրությամբ, իսկ «քաղաքապետի» բառը փոխարինել «քաղաքապետերի» բառով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Երեւան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական
բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման
անհրաժեշտության**

1988թ. աղետալի երկրաշարժից հետո Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում ոչնչացել են բազում բնակելի տների նկատմամբ իրավունք հաստատող փաստաթղթեր, իսկ մի շարք բնակելի տներ էլ կառուցվել են իրենց օթեւան կորցրած քաղաքացիների կողմից սեփական ուժերով:

Սույն օրենքը նպատակ է հետապնդում ճանաչել ֆիզիկական անձանց սեփականությունը իրենց կողմից օրինական կարգով որպես սեփականություն տիրապետվող գույքի նկատմամբ: